Ես ձուկ ու դուն ջուր, հոգի՛, առանց ջուր ձուկըն մեռանի:
Երբ զձուկն ի ջրէն հանեն ’ւ ի այլ ջուր ձըգեն, կու ապրի,
Երբ զիս ի քենէ զատեն, քան զմեռնիլն այլ ճար չիլինի:

Գ.

Կարօտ կարօտովդ էի, հասրաթովդ ի ժուռ կուգայի.
Անկարծ ինձ ի դէմս ելար ’ւ ես ստոր կուման չունէի,
Զինչ մէկ մ’որ ծարուած լինի եւ ի պաղ աղբիւր հանդիպի,
Դընէ զդընչիկն ու խըմէ, որ սըրտին թալուկն անցընի:

Դ.

Սուտ է որ կ’ասեն, եղբա՛րք, թէ ’նտանի կաքաւ չիլինի.
Մէկիկ մ’ես երէկ տեսայ ’ւ երնեկ է զիր տէրն որ ունի:
Ուներն ղալամով քաշած ’ւ իր բերանընն շաքրով ի լի.
Զմեռելն ալ ի գիրկն առնուր ’ւ ի ծոցուն հանէր կենդանի:

Ե.

Այսօր ինձ երնեկ տըւէք քան զամէն օրերն աւելի.
Իմ եարս ալ ինձ հիւր երեկ, երնեկ է զիս ’ւ երնեկ է լի:
Փընռեմ քեզ մախմուր խալի ու բերեմ քեզ շատ հարիֆնի.
Հընցկուն հարիֆնի բերեմ որ ամէնն ի քեզ նըմանի.
Ծօվերդ քեզ գինի անեմ ու զնաւեր՛ըդ տօստօքանի:

Զ.

Ազեստէ քաղած ես դուն ու դըրած ի ոսկի սինի.
Ասի թէ կտրեմ ըզվարդ, լուկ առնեմ ըզհոտըն վարդի.
Նա մարդ ի վըրայ երեկ, թող բաժին լինայ Գըրօղին.
Երթամ աղաչեմ զԱստուծ որ ելնէ հիւանդն ի հաշի նաշին:

ԵՐՐՈՐԴ ՏԱՂԱՇԱՐՔ

Ա.

Ժամիկ մ’աչերուդ ի զատ երբ կացի, նա զիս մոռացար.
Ասիր դուն ի քո մըտիդ թէ՝ գընաց, այլ իսկի չի գար:
Գէմ անդէնըն չիգնացի, որ չլինայ ինձ դառնալու ճար.
Հազար եար փոխան կուտան, չեմ առնուր ու զքեզ չեմ ի տար: